

ԱՆՎԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ
(Եղիշե Պետրոսյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Այս տարի լրանում է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Եղիշե Պետրոսյանի 100-ամյակը: Նա եղել է իմ լավագույն դասախոսներից մեկը, ուսանողներին ազգասիրություն սերմանող մի մտավորական, որի հայրենասիրությունը



նույնքան հավատ է ներշնչում, որքան իր ավանդած հեղինակներից ունեցած խոր գիտելիքները: Նրան ճանաչում եմ 1959 թ. ընդունելության քննություններից. նա ինձ քննող հայ գրականության դասախոսն էր: Եվ հենց նրա քննելու մոտեցումից ես հասկացա, որ նստած եմ իսկական մանկավարժի առջև, որը շահագրգիռ է բուռն ընդունել լավագույններին: Ես այն ժամանակ նրա մասին ոչինչ չգիտեի, և երբ ինձ տարբեր հարցեր էր տալիս Ստեփան Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպից, որը, ի դեպ, ընդունելության ծրագրում չկար, ապա իմ պատասխաններից իր հիացական ընկալումները վկայում էին, որ անձանոթ դասախոսը շատ ազնիվ մանկավարժ է: Հետո բարձր կուրսում նա արևմտահայ գրականություն դասավանդեց և այդ առարկայի լավագույն գիտականներից էր: Շատ համեստ անձնավորություն էր, երբեք չէր ցուցադրում իր գիտելիքները. դրանք պարզ երևում էին նրա դասախոսությունների բովանդակությունից, որոնք խիստ փաստահարուստ էին ու կանոնակարգված:

Ասպիրանտուրան ավարտելուց հետո հայ գրականության ամբիոնում դարձա նրա կրտսեր գործընկերը և առավել մոտիկից ճանաչեցի նրան: Պարզվեց տարիներ ի վեր Եղիշե Պետրոսյանը լուր ու առանց ցուցադրման եղել է մեր ամբիոնի «ազգայնական» թևի պարագլուխը: Այդ խմբի մեջ էին Աշոտ Մկրտչյանը, Հեկտոր Ռշտունին: Ե. Պետրոսյանը և Ա. Մկրտչյանը ծագումով Արևմտահայաստանից էին, որոնց գերդաստանները 1915-ին անողորմ եղեռնի էին ենթարկվել:

Ե. Պետրոսյանը ծնվել է Մանազկերտում: 1939-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1945-ից մինչև իր անժամանակ մահը՝ 1982 թվականը, առանց ընդհատումների եղել է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայ գրականության ամբիոնի դոցենտ, ապա՝ պրոֆեսոր: 1969-ին պաշտպանել է դոկտորական ստենախոսություն Բաֆֆու ստեղծագործության վերաբերյալ: Երկու անգամ ընտրվել է բանասիրական ֆակուլտետի դեկան (1945–1950 և 1968–1972): 1945–1950 թթ. դեկան եղած ժամանակ, ինչպես պատմում էին նրա նախկին ուսանողները, հետպատերազմյան ծանր տարիներին

հնարամտորեն տնտեսապես օգնել է մի քանի ուսանողների, սրտացավորեն փորձելով մեղմել նրանց կիսաքաղց վիճակը: Այս փաստը խոսում է նրա բարոյական նկարագրի և մարդասիրության մասին:

Ե. Պետրոսյանը թողել է մի շարք արժեքավոր գրքեր՝ «Բաֆֆի» (1959), «Գրական դեմքեր» (1977), «Դանիել Վարուժան» (1987): Կազմել, ծանոթագրել և հրատարակել է այն ժամանակ մեզանում դեռևս քիչ ուսումնասիրված արևմտահայ գրողների երկերի ժողովածուներ՝ Ռուբեն Սևակի (1955), Ռուբեն Որբերյանի (1963), Օնիկ Չիֆթե-Սարաֆի (1981):

Ե. Պետրոսյանը Բաֆֆու նվիրյալներից էր, վերջինիս ստեղծագործությունը գիտեր բոլոր մանրամասներով: Նա հետազոտել էր նաև Բաֆֆու շուրջ ստեղծված գրվածքները, հատկապես, հրաշալի գիտեր «Մշակը» և այդ նույն ժամանակահատվածի հայ պարբերականները: Ե. Պետրոսյանի «Բաֆֆի» մենագրությունը ինքնատիպ խոսք է հայ մեծանուն գրողի վերաբերյալ, որում գրականագետը զարգացրել է իր նոր հայեցակետը հայ գրականության այն դասական երկերի մասին, ինչպիսիք են «Սամվելը», «Դավիթ Բեկը» և «Կայծերը»:

Ե. Պետրոսյանի գրականագիտական ուղղվածությունը կապված էր առավելապես հայ հայրենասիրական գրականության հետ. այդ կապը գալիս էր Խ. Արմյանի, Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանի գաղափարների ու գրվածքների քաջիմացությունից: Նա ծանոթ էր «Հյուսիսսփայլի» համարներին և գիտեր այն ամենը, ինչը նախապատրաստել էր Բաֆֆի երևույթի հանդես գալը արևելահայ գրականության մեջ: Սա շատ բնութագրական իրողություն է, որ գրականագետը կրում էր իր ներաշխարհում:

Ի վերջո, կորցրած հայրենիքի կարոտը նրա էության մեջ յուրօրինակ ձևով վերածնվել էր որպես արևմտահայ գրողների նկատմամբ ունեցած բուռն սիրո դրսևորում:

Հայ գրականության պատմության մեջ նրա համար ուղենիշային է դառնում Արշակ Չոպանյանը, որը խորհրդային տարիներին արգելված հեղինակ էր կամ գրեթե արգելված: Ե. Պետրոսյանը Երևանի հանրային գրադարանի մշտական ընթերցողն էր և հենց այդ նշանավոր գրապահոցի հատուկ ֆոնդում էլ կարդացել է Ա. Չոպանյանի արևմտահայ ու արևելահայ գրողներին նվիրած հետազոտություններն ու հողվածները, ծանոթացել հայ գրականության մեծ նվիրյալի ու մշակի Փարիզում հրատարակած պարբերականներին:

Ե. Պետրոսյանի համար Ա. Չոպանյանի՝ գրաքննադատի և գրականության պատմաբանի հայ գրողներին տված գնահատականները եղել են էլակետային: Չոպանյանին նա գնահատում է որպես իր ժամանակի հայտնի, ճանաչված անատարկելի գրական հեղինակություն, «որի օգնությամբ, խորհուրդներին են դիմել հայ գրականության երկու հատվածների ճանաչված բոլոր մեծությունները»:

Անվանի գրականագետը բարձր է գնահատում ոչ միայն հայ միջնադարյան գրականության, հատկապես քնարերգության խոր գիտակ Արշակ Չոպանյանին, այլև դիտարկում է վերջինիս թարգմանական գործը՝ հայ գրողներին՝ ֆրանսերեն, ֆրանսիացի գրողներին՝ հայերեն ներկայացնելու կտրվածքով:

Ծանոթ է Չոպանյանի «Հայաստանի վարդենիք» («La Roseraie d'Arménie») եռահատոր ստվարածավալ ժողովածուներին, որոնք համարում է միջնադարյան բանաստեղծական գեղեցկագույն էջերի ֆրանսերեն թարգմանություն:

Չոպանյանը հայ իրականությանը ներկայացավ նաև ֆրանսիական գրականության դասական գրողներին նվիրված իմաստուն հոդվածներով և ուսումնասիրություններով, որոնք նվիրված էին Վիկտոր Հյուգոյին, Գուստավ Ֆլոբերին, Էմիլ Զոլային, Գի դը Մոպասանին, Էմիլ Վերհառնին, Անատոլ Ֆրանսին, Գոնկուր եղբայրներին և ուրիշներին: Ե. Պետրոսյանը տեղյակ է նաև Չոպանյանի «Վ. Հյուգոն, Լամարտինը և Շատոբրիանը հայ գրականության մեջ» գրքին, որում և գետեղված է Հյուգոյի հայտնի դիմումը հայ ընթերցողին «Թշվառների» հայերեն թարգմանության առիթով: Նա տեղին մեջբերում է Վերհառնի հետևյալ բնութագրումը. «Մենք հայ ազգը ճանաչում ենք Չոպանյանով»:

«Գրական դեմքեր» խիստ ուշագրավ ժողովածուում Ե. Պետրոսյանն ի մի է հավաքել իր երկար տարիների ուսումնասիրությունները՝ նվիրված XX դարասկզբի արևմտահայ գրողներին՝ Սիամանթոյին, Ռ. Զարդարյանին, Ռ. Որբերյանին և Օ. Չիֆթե-Սարաֆին, որոշ երկեր քննված են գեղարվեստական ու գաղափարական կտրվածքով և վերջիններին ինքնատիպ հասարակական հնչեղությամբ: Գրականագետի կարծիքով՝ Սիամանթոյի հենց առաջին գրքում՝ «Դյուցազնորեն»-ում, առկա են բանաստեղծի ստեղծագործության հիմնական բոլոր գծերը և արվեստի ներգործող այն ուժը, որին նա հավատարիմ մնաց մինչև վերջ: Ե. Պետրոսյանը Սիամանթոյի և Դանիել Վարուժանի բանաստեղծական ժողովածուները դիտում է որպես գրողի ու ժողովրդի սերտ կապի հիանալի օրինակներ:

Արժեքավոր է Ե. Պետրոսյանի հետազոտությունը՝ նվիրված Երուխանին, որին նա համարում է «թերևս ամենից քիչ ուսումնասիրված հայ հեղինակներից»: Երուխանի նորավեպերը գրականագետը քննում է՝ զուգադրելով միաժամանակ ֆրանսիացի գրողների երկերը և արևմտահայ գրողների նովելները: Գրականագետի կարծիքով՝ «Երուխանի վերոհիշյալ նորավեպերը առավել իմաստալի նշանակություն են ստանում, այնտեղ պատկերված է ժողովրդի հասարակ մարդկանց վեհությունը, ազնվությունը, հոգու անաղարտությունը»: Գրականագիտական մանրամասն վերլուծության է ենթարկված Երուխանի «Ամիրային աղջիկը» վեպը:

Ե. Պետրոսյանը Օ. Չիֆթե-Սարաֆին համարում է գրական փոքր ձևի՝ մանրապատումի անկրկնելի վարպետ: Չիֆթե-Սարաֆին իր ժամանակի հասարակական հայտնի դեմքերին չի պատկերել ծաղրի գրոտեսկային ձևով, որի փորձին ծանոթ էր իր նախորդներից, ընդհակառակը, «Ազգային տիպեր» շարքում նա կերտել է ժամանակի հանրությանը հայտնի արհեստավորների ռեալիստական կերպարներ, որոնց մեջ խտացրել է ժողովրդի մարդկանց լավագույն գծերը՝ աշխատասիրություն, հնարատություն, գործիմացություն, «մարդիկ, որոնք արհեստը արվեստի են վերածել»:

Ե. Պետրոսյանն ուներ մտավորականի իր հետաքրքրություններն ու շրջանակները: Խորհրդային տարիների բարդությունը հաղթահարելով՝ որպես գրասաշրջիկ եղել է մի շարք երկրներում, այդ թվում՝ Ֆրանսիայի մայրաքաղաքում՝

Փարիզում, որի մասին հիշելիս, կարծես, կորցնում էր խոսելու ունակությունը, և համոզված էր, թե Փարիզը պետք է տեսնել և ոչ թե նրա մասին պատմել: Չարմանալի է, բայց պնդում էր, թե հայուհիներն ավելի գեղեցիկ են, քան ֆրանսուհիները: Այստեղ ևս, հավանաբար, նրա մեջ խոսում էր հայրենասերը: Շատ ջերմ հարաբերությունների մեջ էր անվանի միջնադարագետ Ասատուր Մնացականյանի հետ, որի գաղափարական մտածողությունը, հայրենասիրական ու գիտական գործունեությունը իր համար առանձնապես թանկ էին:

Հայ ավանդական ընտանիքի հայր էր, և պատահական չէ, որ այսօր նրա չորս զավակները հասարակական ու մարդկային առումով հարզանքի արժանի մարդիկ են, տիպիկ մտավորականներ, որոնք կարծես իրենց հոր լուր երազանքների կենսահաստատ հրականացնողներն են: Բավական է միայն հիշել նրանցից երեքին՝ Բանասիրական գիտությունների դոկտոր Արմեն Պետրոսյանին, մանկավարժական գիտությունների թեկնածու Ռուբեն Պետրոսյանին և հայ ժողովրդի շատ սիրելի արվեստագետներից երգիծաբան, տրագիկոմեդիայի նոր ժանր ստեղծած և հասարակական իր դիրքորոշումն արվեստի լեզվով հաղորդող Վարդան Պետրոսյանին, որը հաստատվել է իր հոր կողմից այդքան սիրելի Փարիզում, սակայն սերտ կապ է պահպանում հարազատ Երևանի ու Հայաստանի հետ:

Ե. Պետրոսյանը շատ էր երազում լինել Արևմտահայաստանում, տեսնել իր ծննդավայրը, շրջել կորուսյալ հայրենիքի սրբավայրերում, սակայն նրա ապրած օրերին դա ընդամենը անհրականանալի, բայց թանկ երազանք էր, որի արտահայտման միջոցները դարձան արևմտահայ գրողներին նվիրված բազմաթիվ հետազոտությունները, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական արժեքը:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ